



ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ

իրավաբանական անձանց ժամկետային ավանդի

Ք. _____

" ____ " _____ 20 թ.

«Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս _____

որը գործում է կանոնադրության /լիազորագրի/ հիման վրա, մի կողմից և _____

այսուհետ՝ «Ավանդատու», որը գործում է _____

մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Բանկը, ընդունելով Ավանդատուից ստացված կան վերջինիս համար ստացված դրամական գումարը, այսուհետ՝ «Ավանդ», պարտավորվում է սույն պայմանագրում նշված ժամկետում վերադարձնել Ավանդի գումարը և սույն պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով տոկոսներ վճարել դրանից:

1.2. Ավանդի գումարը և արժույթը՝ _____ (գումարը թվերով և տառերով)

1.3. Ավանդի տոկոսադրույքը՝ _____ տարեկան: (տոկոսադրույքը թվերով և տառերով)

1.4. Ավանդի վերադարձման ժամկետը՝ " ____ " _____ 20 թ.

1.5. Ավանդային գործառնությունների կատարման համար Բանկն Ավանդատուի համար բացում է թիվ _____ ավանդային հաշիվը: Այն դեպքում, երբ *Ավանդատուն* ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել Ավանդի գումարը, ապա այդ գումարը և հաշվարկված տոկոսները փոխանցվում են ցպահանջ ավանդների հաշվին առանց լրացուցիչ պայմանագրի կամ համաձայնագրի կնքման, և հետագա տոկոսների հաշվեգրումը կատարվում է ցպահանջ ավանդների համար սահմանված դրույքաչափով և կարգով:

1.6. Ավանդի տոկոսների վճարում՝

ամիսը մեկ անգամ (յուրաքանչյուր ամսվա _____) *երեք ամիսը մեկ՝ _____* *ժամկետի վերջում*

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. *Բանկը*, նշված ժամկետը լրանալուց հետո, պարտավորվում է վերադարձնել *Ավանդատուին* Ավանդը այն դրամական միավորով, որով ներգրավված է եղել: Հաշվարկված տոկոսները Ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով:

Եթե Ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվա հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:

2.2. Պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում պահպանվում է Ավանդատուի և Ավանդի գաղտնիությունը. տեղեկությունները տրվում են միայն օրենքով սահմանված կարգով:

2.3. Ավանդային հաշվի տնօրինման իրավունքը այլ անձի կարող է փոխանցվել օրենքով սահմանված կարգով հաստատված լիազորագրով:

2.4. Եթե Ավանդը Բանկում ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն սույն պայմանագրի ստորագրման և/կամ կնքման փաստով հավաստում է, որ նա գիտակցում է արտարժույթի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները, և նախընտրում է Ավանդը ներդնել արտարժույթով:

2.5. Ավանդի ներդրումը հավաստվում է բանկային փաստաթղթով (չեկով, իճարման հանձնարարականով, մեմորեալ օրդերով, այլ վճարային գործիքով), առանց որի սույն պայմանագիրը առոչինչ է, և Բանկի կողմից տրամադրված քաղվածքով: Վերջինս տրամադրվում է Ավանդատուին ոչ ուշ, քան ավանդային հաշվի վրա Ավանդի գումարի մուտքագրմանը հաջորդող բանկային օրը: Բանկի և Հաճախորդի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա քաղվածքը տրամադրվում է՝

- առձեռն
- փոստի միջոցով _____ /հասցե/
- էլեկտրոնային կապի միջոցով _____ /e-mail/

2.5.1. Ավանդային հաշվից անկանխիկ ելքագրումների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվում է վերը նշված քաղվածքը 2.5 կետով սահմանված պայմաններով:

2.6. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսներն հավելագրվում են Ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

2.7. Այն դեպքում, երբ Ավանդը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափով և կարգով կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ, իսկ դրա արդյունքում ավել վճարած տոկոսագումարները պահվում են ժամկետային ավանդից, որից հետո մնացած մասը վերադարձվում է Ավանդատուին:

2.8. Այն դեպքում, երբ Ավանդի մի մասը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Ավանդի վերադարձվող մասի նկատմամբ Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է ցպահանջ ավանդների համար սահմանած դրույքաչափով և կարգով կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ՝ վերադարձվող ավանդի մասով, իսկ դրա արդյունքում ավել վճարված տոկոսագումարները պահվում են ժամկետային ավանդի վերադարձվող մասից, իսկ պայմանագիրը շարունակում է գործել Բանկի տնօրինության տակ մնացած ժամկետային ավանդի մասով, և դրա դիմաց տոկոսները շարունակվում են հաշվեգրվել պայմանագրով նախատեսված չափով:

2.9. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարից իրականացնում է գանձում՝ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի:

2.10. ՀՀ օրենքներում և ենթօրենսդրական ակտերում կատարվող փոփոխությունները, որոնց գործողությունը տարածվում է սույն ավանդային պայմանագրի վրա, ենթակա են պարտադիր կատարման, և կողմերը պարտավորվում են ղեկավարվել կատարված փոփոխություններով:

2.11. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

2.12. Ավանդային պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այդ պահին Բանկում գործող պայմաններով:

Գումարը (թվերով և տառերով) և արժույթը			
Երկարաձգման ամսաթիվը			
Մարման ամսաթիվը			
Ամեն ամիս վճարվող տոկոս			
Երեք ամիսը մեկ վճարվող տոկոս			
Ժամկետի վերջում վճարվող տոկոս			
Տոկոսադրույքը (թվերով և տառերով)			
Ստորագրություն	Ավանդատու		
	Բանկ Կ. Տ.		

* Երեք անգամից ավելի երկարաձգումները կկատարվեն պայմանագրի լրացման հիման վրա:

2.13. Ավանդատուն հավաստում է, որ մինչև Պայմանագրի ստորագրումը նախօրոք ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման կարգի դրույթներին և նրանում նշված բոլոր նմուշներին, որոնք փակցված են իրենց համար տեսանելի տեղերում, և լիովին ընդունում է Պայմանագրով ամրագրված պայմանները:

ԲԱՆԿ

ԱՎԱՆԴԱՏՈՒ

Հասցե _____

Հասցե _____

Հեռախոս _____

Հեռախոս _____

/ստորագրություն/

/ստորագրություն/